ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»
(ՀՀԿ) ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևան Բաղրամյան 19 հեռ. 011 513 281, 010 52-54-12

Հարգելի տիկին Ռուզան Տոնոյան.

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և գրադարանի ողջ անձնակազմին Գրադարանավարի օրվա առթիվ: Գրադարանավարի տոնի խորհուրդը գրքի արժևորումն է: Գիրն ու գրականությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն են կազմել դարեր շարունակ: Առաջին գրաճանաչ ազգերից մեկը լինելով՝ կերտել ենք համաշխարհային նշանակության արժեքներ, ստեղծագործություններ, որոնք անգին են: Այսօր կապը գրքերի զարմանահրաշ աշխարհի հետ, ապահովվում է Ձեր աշխատանքի միջոցով: Գրադարանավարի լայն մտահորիզոնի և վարպետության շնորհիվ է, որ գրքերի անծայրածիր աշխարհում յուրաքանչյուր ոք կարողանում է Ձեր խորհրդով գտնել իր հանգստությունը, հոգու խաղաղությունն ու ներդաշնակությունը: Ինչքան էլ, որ զարգանան տեղեկատվական տեխնոլոգիաները և գրքի կիրառությունը գնալով պակասի, վստահ եմ, որ ընթերցասեր մարդը միշտ կնախընտրի գիրքը, դրա՝ թեև մաշված, բայց իրենց մեջ մի ամբողջ պատմություն ամփոփած թերթերը, գրքի յուրօրինակ ու ստեղծագործությանը ուրույն հետաքրքրություն հաղորդող «հոտը»: Ի վերջո Ձեր աշխատանքի շնորհիվ է ապահովվում գիտելիքի փոխանցումը, մարդը հնարավորություն է ստանում ուսումնասիրելու իր ժողովրդի պատմությունը, անցյալը, դառնում ավելի հայրենասեր և պատասխանատու ինքն իր նկատմամբ, կարողանում է թափանցել մշակութային աշխարհի խորքերը, բավականություն ստանալ կարդացած յուրաքանչյուր տողից ու տառից, իսկ այդ մեծ գործում անհերքելի է Ձեր մշտազգոն աշխատանքի ներդրումը:

Եւս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեզ, հարգելի՛ գրադարանավարներ, մասնագիտական տոնի առթիվ: Եղե՛ք առողջ, գնահատված, ուրախ ու երջանիկ: Մաղթում եմ, որ ընթերցասեր հայի տեսակը միշտ պահպանվի և երբեք չպակասի:

Խմբակցության ղեկավար՝
Վահրամ Բաղդասարյան